

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^ր ՏԱՐԻ, 2. ՇՐՁԱՆ

ԹԻԻ 20

9 ՅՈՒԼԻՍ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շաբաթը. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ:—Կեանք ու միտք. «Բիշեկ մը» ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ:—Քանազանի ծուքիւններ. «Հոնկէ անցած քլալու ե...». Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ. «Խոնջ իրիկունն աւազորեմ...». ՄԻՍԱԲ ՄԵԾԱՐԵՆՅ:—Բժեկական Գրոնիկ. ՏՈՔԹ. Տ. ԱԼԼԱՀՎԷՐՏԻ ՈՐԴԻ. —Ալիօլամոլի զաւակ (Պասկեր մը ընտանեկան կեանքէ) Մ. Ֆ. ԷՊԼԻԴԱԹԵԱՆ:—Զանազանք:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաթերթի տարեկան բաժանորդագրինքն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դր. եւ զաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Զրանք կամ 5 ռուպլի: Թղթատարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայմաններով:

Զեռ-ԲԷ ԿՐ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐՍՅԻ
Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غزته سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ


Կ. Պոլս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԱԶՂՈՒ ՄԻՋՍՏԱՍՄՊԱՆ ՓՈՇԻ ՓՆՏՈՂՆԵՐՈՒՆ ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ ՄԸ

Կ'ուզե՞ք հանգիստ ու մքրիկ-մքրիկ քնանալ ու ազատի
սա աներես միջասեռուց տուած շարշարաններէն. ԴԻՍԵՅԷ-Ի
ՈՒՂՂԱԿԻ



ԽԱՉԻԿ ՖԷՍՃԵԱՆԻ ԴԵՂԱՐԱՆԸ

Մահմուտ փառա Պաշի, պողաշահիին դէմ,
քիւ 261

Աւր պիտի գտնէք թորմ եւ առաջին տեսակէն խիստ ազդու
Տաւաջիւի միւկ միջատասպան փաշի, որ վարկեհապէս կ'ապանէ ու կ'աշխարհէ միուկը
յուն (փրէ), ոգիւր, հանքը, մծեղը (փշրիտնէք), ուսիքը (կիւլ), քրքրքրք, ցոբցի-ու-
սիքը եւ ուրիշ բնի մը միւսակար միջատներ ու ճճիներ. այն փաշիները մեծ ու պզտիկ
մասնաւոր տաւփերու մէջ դրուած պատրաստ կը ծախուին: Ուստի մտէն տեսնէք որոնք
պէտք ունին ազդու միջատասպան փաշի եւ կ'ազննգիշերենքը տնուշիկ-տնուշիկ քնա-
նալ եւ առողջութիւննին չը խանգարուած արթննալ, թող հաճին դիմել դեղարանո գնե-
լով տաւփ մը փաշի. քանի որ այս տեսակ պէտք մը գոհացնելու համար դեղարանո ունի
իր դիւրութիւնը՝ Պաշայ կարեւոր եւ կեդրոն մէկ տեղը գտնուելովը: Աւելորդ նկատած
չենք ըլլար հոս տեղում մը եւս իշխցնելու թէ՛ Դեղարանո ար Պաշ. հասարակութեան չը-
տարիւ քիչ ժամանակուան մէջ ջերմ ընդունելութեան արժանացաւ իր բաղդամիա գործու-
նէութեամբը, միշտ ծառայելով իր նպատակին, այն է դեղերու թորմութեամբ, դեղագրե-
րու արագ եւ ճշգրտակի պատրաստութեամբ, գիշերու չափաւորութեամբ եւ որ տնւին է
տրուեստին խղճամիտ գործադրութեամբ միշտ գոհ ձգելով իր ազնիւ լաճախորդները:

Դեղարանո նաեւ Եւրոպական տան մը հետ ալ բանակցած ըլլալով մտէն շարժու Զուի-
ցերիական թորմ պատաստաթի քիւպեր (չը գտնւի) կը հասնին բոսթալով եւ գաւառա-
յին լանձնարարութիւնք փութով կը կատարուին:

Յիշենք նաեւ մտէն որ Դեղարանո լաճախող Հայ եւ օտարազգի բժշկիկներէն մասնաւոր
որոշոր ծանօթ Բժիշկ ԱԼԼԱՀՎԵՐՏԻ ԷՅ. ար մտէն Դ. Ե. Շ. օրեր ժամը 8—11 իրեն
դիմել հիւանդները կը դարմանէ իր ծանօթ փաճառութեամբ եւ մասնագիտութեամբը
դեղարանի մասնաւոր դարմանարանը:

Ահա մասամբ մը պարզելով Դեղարանի ներկայ վիճակը, կը յուսանք թէ՛ արգոյ լա-
ճախորդները ինչպէս ցորդ, ի՞նչ տալու եւս միշտ պիտի շարունակեն իրենց վստահութիւնը
Դեղարանի նկատմամբ, եւ փոխանակ հեռուար տեղեր դիմելու՝ ուղղակի պիտի այցելեն
Դեղարանո, ուր մտէն տեսակ դիւրութիւններ պիտի ընծայուին իրենց կատարելապէս գտն
թողելու համար, քանի որ Դեղարանի սկզբունքը եղած է ՈՒՂՂՈՒԹԻՒՆ:

ԴԵՂԱՐԱՆՍ ՈՒՆԻ ՆԱԵՒ ԴԻՇԵՐԱՅԻՆ ՍՊԱՍ

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԷ ՅՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՊԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապահովագրեալներու եղած վնասում 300 միլիոն ֆր.
Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւն 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՅՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ 62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեստի համեմատու-
թիւնն է 74% . որով ՔԷՍ ԲԱԴԵՐՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը
հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տուած երաշխաւորութիւնէն:

Ընկերութեան վարչական Խորհուրդը կազմուած է Ծրանաշի ամէնէն նշանաւոր
դատաւորներէն. ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ծրանաշի երկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի
Լիօնէի վարչական Խորհուրդ անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԷՌ, Դրանաշի անդիք ընկերութեան վարչական Խորհուրդ անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻԼԷՄ, նաեկին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիօնէի.

Թուրքիոյ Տնօրէն Փ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Պալիս, Սուլթան-Համամ, Բասաժ Քաթրաճըօղլու

Ընկերութեան վաստակներէն առնելու համար դիմել Քրէտի Լիօնէի.

ԾԱՆՈԹ.— Շահաւոր դիմել պիտի տրուի այն ֆենիչին որ կարեւոր արդիւնք մը ի
ագործած քլայ անձնապէս:

10—10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամէն տեսակ բոհաֆիյէ ապրանց

Մեծ—Շուկայ, Քիւրքճիներու դրան կէց, Թ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանանց ճաշանաւոր
հովանոցներու վաճառատուն, Պալիս, Սուլ-
թան—Համամ, Միտիլի Դրամատան դէմ
թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ
գտնուած ապրանքները, թէ՛ Թօնաֆիյէի
վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յա-
տակ հովանոցներ, իրենց գեղեցկութեան
կը միացնեն տակաւնութիւն, եւ դիւրամատ-
չելի գիներու առաւելութիւնն ալ կ'ընծայեն
հասարակութեան:

Աղամ վարդեան մեծապէս գոհ
թողացած է իր բազմաթիւ յաճախորդներէ:

պէտք է որ Շուկայ կլլող ամէն ընտանիք
այցելէ, անգամ մը այս երկու վաճառատուն-
ները՝ եղանակին պէտքերը հաջաւոր համար:

10—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ
դատ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ
ի վեր կը դարձնէ ստամոքսի, աղեաց,
միզային ճանքաներու հիւանդութիւնները,
զղային տկարութիւնները, հին եւ նոր գա-
ղիական ախտերը, Այս վերջին ախտերը՝ ա-
ռանց ստամոքսի խանգարման եւ նորագոյն
մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ
վերջը Զարեքաբէի օրերը միայն ձրի: 10—10

Հիւանդութեանց դէմ ապահով է եթէ իր մէջը չի գտնուի շիշ մը



SCOTT'S EMULSION

(ԸՍԳՕԹԻ ԲԱՂԱԳՐՈՒԹԻՈՒՆ)

Թոքախտ, պրօնշիտ, հալ, հարբուխ և բարակցաւ, և տղայոց անդամներու թուլութիւն, խոլ (սըրաճա) և բոլոր արեան աղետներու համար անգին դարման մըն է. Ըռաջին անգամ առնուելով բժշկելու կ'ըսկսի և կը շարունակէ: Ըմեն տարի հաղարաւոր տղայք մահուանէ աղատելու կը ծառայէ: Հիւանդութիւններէ վերջը կորսուած զօրութիւնը կը վերականգնէ, և աչքերու փայլունութիւնը ետ կը բերէ և ժարմնոյ կեանք կուտայ: Գեղերու մէջ նոր հրաշք մըն է, և ուտելիքներու նկատմամբ ալ հրաշք մըն է: Սիշտ վրան այս պատկերով վարդագոյն փաթեթի մը մէջ կը գտնուի:

Շէշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

Բոլոր բեղաւորները և բեղաւորները և ծախէն:

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

ՈՒՆԻ կԵԱՆՔԻ, ՕԺԻՏԻ, ԱՐԿԱԾԻ, ԳՆԱՆ ԹՈՇԱԿԻ ՆԻՒԴԻՐ
VICTORIA ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻ ԹԷ՝
 ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹԵԱԾԻ ԿԸ ԹԷ ԱՌԱՆՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹԵԱՆ
 ԸԱՌԱՆՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹԵԱՆ ԵՂԱԾ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
DE ԲՈՒՆ ՎՃԱՐԱԾՆԵՐԸ ՆԱԲԱԹԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՃԱՐՆԵՐՈՎ ԱՆԴՂԻ ԿՈՒՆԵՆԱՆ,
BERLIN սկսեալ 5 ղրուշէն

Ապահովագրեալ գումար 1903ից Ֆր. 1,325,000,000

Պահեստի դրամ 1903ից » 510,000,000

Հառատուած 1853 սեպտ. 20ին արտայականհրովարտակով եւ ուղղակի կառավարութեան հսկողութեան ներքեւ:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայսր Պանրա եւ Գրէտի Լիոնէ

Լիպգոր Բնդհ. Ներկայացուցիչ ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՖԱՅԵԱՆ

Պոլիս Քաբընըօղլու խան

ԱՄԱՆԻ

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 20

9 ՅՈՒՆԻՍ 1905

Շ Ա. Բ Ա. Թ. Ը

(ԽՄԲԱԳՐԱԿԱՆ)

Հակառակ հեղձուցիչ տաքերուն որոնք, սովորաբար, տարուան այս եղանակին դար դար կուտան վարչական ու ժողովական աշխատութեանց, յուլիսի առաջին եօթնօրեակը ոգեւորուած կը ներկայանայ գրական ու կրթական հանդէսներով և մատակարարական գործերով:

Երուսաղեմի հաշուեքննիչ Մասնախումբը, ընդհանուր ուշադրութեան ու հետաքրքրութեան առարկայ, իր նիստերը կանոնաւորապէս կը գումարէ Պատրիարքարանի մէջ և Տ. Ղեւոնդ վրդ. Մաքսուտեան, Ս. Յակոբեանց Միաբանութեան Ելեւմտից նախորդ Տեսուչը, կը փութայ անձամբ պատասխանել իրեն ուղղուած հրաւերին՝ Մասնախումբին երթալով և լուսաբանութիւններ ու բացատրութիւններ տալով պէտք տեսնուած կէտերու վրայ: Իր այս օրինապահ ընթացքովը, Տ. Ղեւոնդ վրդ. ո'չ միայն յուսախաբութիւն կը պատճառէ իր այստեղի ու Երուսաղեմի հակառակորդներուն, որոնք «հաշուեխոյս» բառ մըն ալ ստեղծեր էին՝ աւելի ևս գայթակղեցնելու համար հանրութիւնը, այլ նաև իր անձին օրինակովը ցոյց կուտայ թէ բարեպաշտական, — ինչպէս նաև կրթական կամ բարեգործական, — հաստատութեանց օգտին անձնուէր եռանդով աշխատող մը ինչպէ՞ս պէտք է անայլայլ մնայ իր դէմ յարուցուած անտեղի պայքարներուն առջև և նոյն իսկ իր վարած հաստատութեան ղէկը ձգելէն ետքն ալ՝ անվրդով սպասելու է ձեռնհաս մարմինն քննութեան ու հանրային դատողութեանը որ անկէ պիտի բղխի:

Որչափ աւելի այս ուղիղ ընթացքը կը բռնէ Տ. Ղեւոնդ վարդապետ՝ այնքան աւելի յերկրանքները կը ստուարանան, կը ծաւալին, կը բազմապատկեն իր շուրջը, Երուսաղեմի վանքին անկիւններէն հասնող լուրերով ու թղթակցութիւններով որոնք սիրալիր ասպընջականութիւն մը կը գտնեն մէկ-երկու թերթերու մէջ:

Թէ ո'ր աստիճան ստոյգ են այդ գրուածքները կամ հիմ մը ռենիոն գէթ, հաշուեքննիչ Մասնախումբին եղբակացութիւնը ու անոր յաջորդելիք վարչական որոշումը պիտի ճշդեն: Առ այժմ, բան մը ըսելը՝ անձահօրէն կանխել պիտի ըլլար այդ եղբակացութիւնն ու որոշումը, թէև Ղեւոնդ վրդ. ի հակառակորդները այլապէս կը խորհին, և մէկ օրէն միւսը՝ աներեւակայելի համեմատութիւններու բարձրացնել կը ճգնին վանքին բացն ու պարտքը:

Մեր մասին, Տ. Ղեւոնդ վարդապետի Կ. Պոլիս ժամանման օրէն ի վեր շատացած ենք Մասիսի մէջ հրատարակել միայն Պատրիարքարանէն բղխած լուրերը ու վարչական որոշումները, առանց օրէն խորհրդածութեան, sans commentaire, սպասելով միշտ որ ճշմարտութիւնը, բուն իսկ իրողութիւնները ի յայտ գան, ուշ կամ կանուխ, կատարուող քննութեան բովէն. և որքան ալ «Սամալիական թղթակիցներ» ու անոնց օւկան եղող լրագիրներ շարունակ Ղեւոնդ վարդապետի անունը առաջ կ'անցունեն՝ բողոքովին անձնական գոյն մը տալու համար

խնդրին, վարչական Մասնախումբը որուն կը նախագահէ Ս. Պատրիարք Հայրը, շատ լաւ ըմբռնած է թէ ամբողջ միաբանութեան մը եւ նուիրական Վանքի մը ու Աթոռի մը պատիւն է որ կը ներկայանան թէ խոտոր տեսակէտ մը, կուսակցական նկատում մը, այս քննութեան փափուկ գործին մէջ, այդ Միաբանութեան, Վանքին ու Աթոռին միասնելէ ուրիշ արդիւնք չեն կրնար ունենալ, բարոյապէս ու նիւթապէս:

Մենք այն հաւատքը ունինք թէ ինչպէս կ'ենք. Վարդութիւնը՝ իր Ս. Նախագահով, նոյնպէս հաշուեքննիչ Մասնախումբը, որուն անդամներուն պատուաւորութիւնը ու անկողնակալութիւնը ակնյայտնի են, չպիտի ազդուին բնաւ ըստածներէն ու գրուածներէն, ու իրենց միակ նպատակակէտը և ուղեգիծը պիտի մնայ—ինչպէս է արդէն—Երուսաղեմի վանքին նուիրականութիւնը ու վարկը պահպանել, մատակարարութիւնը աւելի՛ ամուր կռուանի մը վրայ դնել և Միաբանութեան մէջէն բառնալ այն տխուր ու տաղտկալի վէճերը որոնք ամէնէն բարեպաշտ Հայուն սիրտը անգամ պաղեցնել կըսպառնան այդ մեծ ուխտատեղիէն:

Բարեբաղդաբար, բարոյապէս սրտապընդիչ հանգամանք մը ունէր բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանցի գրական մրցանակաբաշխութիւնը որ պահ մը եկաւ մոռցնել տալ մատակարարական ու միաբանական այս խնդիրները՝ զո՛ւտ գրական ու բարեսիրական մթնոլորտի մը մէջ պարուրելով անոր ներկայ գտնուողները, Ս. Թարգմանչաց տօնին օրը: Այդ հանդէսը, որուն հակիրճ մէկ տեղեկատուութիւնը հրատարակած ենք Մասիսի ներկայ թիւին մէջ, վերջին պահուն, մէկէ աւելի շահեկանութիւններ կընծայէր այս անգամ, գրական ու բանասիրական տեսակէտով: Ներկայացուելիք երկասիրութեանց նիւթը, — բառաքննութիւն, — նախապէս որոշուած ու սահմանուած ըլլալով հանդերձ Յանձնաժողովին կողմէ, չա՛տ աւելի թուով երկասիրութիւններ ներկայացուած էին՝ քան այն թուականներուն ուր հեղինակները իրենք կընտրէին իրենց նիւթերը: Յետոյ, Յանձնաժողովը հարկ դատած էր միանգամ ընդ միշտ յայտարարել իր տեղեկագրին մէջ, թէ աւելորդ է շարունակ կրկ-

նել լրագրական այն գանգատը, թէ վարձատրուած գործերը դարակներու խորը կը մնան ու չեն հրատարակուիր: Աղա Յովսէփ Իզմիրեանցի կտակը հրատարակչական տրամադրութիւն մը չի պարունակէր և անոր ոգին ու նպատակը կը սահմանափակուին՝ հեղինակները քաջալերելու մէջ, դրամական մըրջանակներով:

Ընդհանուր կերպով, հինգշաբթի օրուան գրական հանդէսին տպաւորութիւնը լաւագոյն էր քան նախորդ տարիներունը, թէ՛ պատկաւորներու թիւին սովորականէն աւելի ըլլալուն և թէ՛ մրցանակի արժանացած երկասիրութեանց երկարաւունջ ու աշխատուած գործեր ըլլալուն պատճառաւ, որոնք պիտի կրնան ատաղձները կաղմել աշխարհիկ լեզուի մեծ բառարանի մը: Յանձնաժողովը, իր վերե յիշուած յայտարարութենէն ետքը, աւելցուց սակայն թէ մտադիր է պատրաստել ու տպագրել տալ այդ տեսակ բառարան մը, ինչ որ տեսակ մը գոհացում կուտայ յայտնուած փափագներուն՝ հրատարակչական տեսակէտով: Ըլլալիքը բացառութիւն մըն է, բայց զնահատելի բացառութիւն մը, տեսական օգտակարութիւն մը ունենալու սահմանուած, որուն համար ևս շնորհաւորելի է Յանձնաժողովը:

ՎՍԵՄ. ՔԷՄԱԼ ՊԷՅ

Դոհութեամբ կը ծանուցանենք թէ Վհ. կայսրը գնահատելով Տպագրական Տեսուչ Բէմալ պէյի բարուք պաշտօնավարութիւնը, բարեհաճած է Պալատ աստիճանին բարձրացնել Ն. Վսեմութիւնը:

Վսեմ, Բէմալ պէյ, որ արդէն իսկ իր կարողութեան ու արժանեաց ապացոյցները տուած էր պետական ծառայութեան մէջ, Տպագրական Տեսչութեան կարեւոր պաշտօնին կոչուելէն ի վեր՝ նորանոր ապացոյցներ տուաւ իր ձեռնհասութեան ու խղճամիտ գործունէութեան, և այն բարձր շնորհը որուն կ'արժանանայ այս անգամ, թանկագին հաւաստիք մըն է կայսերական բարձր գնահատման:

Մասիսի խմբագրութիւնը կը փութայ, այս բերկրալի առթիւ, իր շնորհաւորութիւնները մատուցանել Տպագրական Վսեմ Տեսուչ պէյին:

ԿԵԱՆՔ ԵՒ ՄԻՏՔ

Բ. — «ՔԼԻՇԷ ՄԸ»

Վճարման գրութեան անբաւականութեանէն անիրաւուած հայ գրագէտը՝ գրեթէ միշտ՝ հասարակութիւնը այնքան պատասխանատու չէ նկատած իր ողորմելի վիճակին որքան այն հրատարակիչներն ու լրագրագետները՝ որոնք իր գրչին արդիւնքը կապտած են կամ ձրիաբար, և կամ շատ արհամարհելի փոխարինութիւններով:

Ճիշդ է որ մեր աշխարհիկ գրականութեան սկզբնաւորութեան միջոցին՝ գիրք ու թերթ շատ փայլուն ընդունելութեան մը առարկայ չեն դարձած հասարակութեան կողմէ, բայց ասոր պատճառը՝ ժողովուրդին անտարբերութիւնը չէ, այլ դարգացման պակասը որ 60—80-ական թուականներուն՝ ընդհանուր թերութիւն մըն էր որչա՛փ Պոլսոյ, այնքան ալ գաւառներու հայ ժողովուրդին համար: Անգամ մը որ այս պարագան ճշգրէնք այսպէս, զիւրաւ կրնանք հետեւցնել թէ քանի՜ ժողովուրդը դարգանար, այնքան նաև ընթերցասիրութիւնը պիտի տարածուէր, հետեւաբար՝ գիրք ու թերթ, ժողովուրդին դարգացման համեմատութեամբ, աստիճանաբար աւելի սպառում պիտի գտնէին: Եւ իրականութեան մէջ ալ ճիշդ այսպէս եղած է արդէն:

Դիտելի պարագան սակայն սա է որ, ժողովուրդին աստիճանական դարգացումը և անոր արդիւնքը եղող ընթերցասիրութեան տարածումը երբեք չեն շրջած գրական գործերու սպառման մասին կազմուած աննպաստ գաղափարը: Սկիզբէն՝ հրատարակիչ, լրագրագետ ու հեղինակ՝ բացարձակ իրաւունքով կը գանգատէին թէ լրագիրն ու գիրքը այնքան քիչ կը ծախուին որ նոյն իսկ տպագրութեան անխուսափելի ծախքերը անկարելի կ'ըլլայ հանել: Եւ այս գանգատը բնական հետեւութեամբ մը մեղադրանքի փոխուելով՝ կը նետուէր հայ ժողովուրդին

ձակտին: Բայց հայ ժողովուրդը այդպէս չէր մնար. հետզհետէ դպրոցներ կը բացուէին, կրթական մարմիններ կը հաստատուէին և կրթութեան գործը կը տարածէին, նոյն իսկ գաւառներու յետին անկիւններուն մէջ. սերունդէ սերունդ՝ զարգացումը կը բարեշրջուէր ու կ'ընդհանրանար, և գիրք ու թերթ կը սպառուէին աւելի մեծ համեմատութիւններով: Սակայն գանգատը նոյնը կը մնար, նոյնը կը մնար նաև անոր արդիւնք եղող մեղադրանքը: Հայ ժողովուրդը միշտ անընթերցասէր կը հռչակուէր, և հայ հրատարակիչն ու լրագրագետը միշտ կը շարունակէին լալ ու հեծել՝ գրքի ու թերթի սպառման անբաւականութիւնը ողբալով: Նոյն իսկ, ուշագրաւ հակադրութեամբ մը, քանի՜ գրական գործերու սպառումը կ'աւելնար, այնքան աւելի կը զօրանար հայ ժողովուրդին անտարբերութեան և անընթերցասիրութեան մասին կազմուած գաղափարը: Այսպէսով՝ այդ գաղափարը տարուէ տարի զօրացաւ, մինչև որ դարձաւ մէկը այն գրական փոփոխութիւններէն որոնք գործածական հասարակ-տեղիքներու պէս կը կիրարկուին ամէն տեղ և ամէն առթիւ: Այսօր իսկ՝ ուր մեր ժողովուրդը այնքան ընթերցասէր դարձած է որ կրնայ հինգ օրաթերթի և եօթը պարբերականի գոյութեան միջոցներ հայթայթել, տակաւին այդ փոփոխութիւնը կը գործածուի, ամէն անգամ որ առիթ մը ներկայանայ: Հետաքրքրական պիտի ըլլար անշուշտ պարզել այս տարօրինակ ու հնճոտ երեւոյթը: Ինչո՞ւ համար այդ աստիճան սխալ գաղափար մը ասրեր է այսքան երկար ժամանակ, և հետզհետէ աւելի կենսունակութիւն ստանալով դարձեր է մնայուն և ամրակուս փոփոխութիւն:

Անուրանալի է որ այդ գաղափարին ստեղծիչներն ու առաջին տարածիչները եւ

դած են մեր հրատարակիչներն ու լրագրապետները, և մենք ցոյց տուինք արդէն թէ սկիզբները, — այսինքն՝ մօտաւորապէս 60-80ական թուականներուն, — բացարձակ իրաւունք ունէին այդպէս ընելու: Հրատարակիչ ու լրագրապետ իսկապէս չէին քաջալերուէր, և երբ հեղինակ մը կամ յօդուածագիր մը կտոր մը ձեռագիր կը ներկայացնէր իրենց՝ փոխարինութեան ակնկալութեամբ՝ միշտ միեւնոյն անփոփոխելի յանկերգը կը կրկնէին. — «Ամենայն սիրով, հա՛րկաւ պէտք է վճարուիք, ատիկա ձեր իրաւունքն է, բայց գիտէք անշուշտ թէ ժողովուրդը ընթերցասիրութեան ճաշակը չունի, թէ գրական հրատարակութիւնները չի քաջալերեր, թէ...»: — Անանկ որ՝ ներկայացուած ձեռագիրը յաճախ իբր Եմոռն միայն կ'ընդունուէր ձրիապէս: Շատ անգամ ալ՝ այս գանգատները ա՛յն աստիճան ողբերգական չնշտով մը կ'արտաբերուէին որ հեղինակը ձեռագիրը ձրիաբար յանձնելէ վերջ կը սրտմտէր թէ ինչո՞ւ բաղդը դրամ չէ տուէր իրեն որպէս զի կարենայ մաս մը բան տալով վարձատրել հրատարակչին այդ... զոհողութիւնը: Բայց գոնէ ութսունական թուականներէն վերջ՝ հրատարակչութեան և լրագրութեան պայմանները կը փոխուէին: Թերթ ու գիրք կըսկսէին Բօուի — ինչպէս կ'ըսուի սովորաբար, — հետեւապէս՝ հրատարակիչներն ու լրագրապետները կըրնային իրենց չահէն մաս մը բան՝ զոհել այն գրողներուն սիրոյն՝ որոնց աշխատութեան ու տաղանդին կը պարտէին յաճախ իրենց թերթին վարկն ու գոյութեան իրաւունքը:

Բայց անոնք չուզեցին այդ զոհողութիւնը ընել և իրենց պիւտճէին մէջ մասնաւոր գլուխ մը բանալ աշխատակցութեան վարձատրութեանը համար: Եւ որպէս զի այդ զոհողութիւնը չընեն, կարելի եղած ամէն միջոցներով աշխատեցան մշտնջենաւորել հայ ժողովուրդին անընթերցասիրութեան ու գրքերու և թերթերու ողորմելի սպառման մասին գոյացած գաղափարը: Այս աշխատութիւնը պարապը չգնաց: Վերջ ի վերջոյ՝ նոյն ինքն հայ գրագէտը, — միամտաբար

խաբուած ու համոզուած, — սկսաւ առիթներ ստեղծել մեր ժողովուրդին այդ անտարբերութիւնը ձաղկելու, և գրական ձեռնարկներու մասին ցոյց տրուած աննշտն ու անբաւական քաջալերութեան վրայ ողբալու համար: Ասկէ աւելի ի՞նչ կ'ուզէին հրատարակիչներն ու լրագրապետները: Իրենք կ'աշխատէին երկարել սխալ գաղափարի մը կեանքը՝ իրենց համար անհրաժեշտ ու թանկագին տարր մը, — գրող տարրը, — խաբելու համար և ահա նոյն ինքն այդ տարրն էր որ խաբուելէ վերջ ուրիշները կը խաբէր անգիտակցաբար: Այս պայմաններուն մէջ, բնական է որ հայ ժողովուրդին անընթերցասիրութեան մասին գոյացած գաղափարը պիտի մշտնջենաւորուէր, և կրկնուելով կրկնուելով այսպէս Բիբէ մը պիտի դառնար:

Կը տեսնուի ուրեմն թէ հայ գրողը իրաւունք ունի վճարման դրութեան այս անբաւական վիճակին պատճառ՝ լրագրապետները և հրատարակիչները նկատելու, և այդ դրութեան բարեփոխումը, այսինքն աւելի արդար և աւելի արժանի վճարման դրութեան մը հաստատումը անոնցմէ ակնկալելու: Մենք այստեղ մեր խորհրդածութիւնները կը մասնաւորենք մի՛ միայն հայ լրագրապետներուն վրայ, մեկուսացնելով հրատարակիչները որոնք համեմատաբար շատ անկարեւոր դեր մը միայն կատարած են մեր մտաւորական զարգացման գործին մէջ:

Արդ, երկար ժամանակ խաբուելէ վերջ, հայ գրագէտը պահ մը անդրադարձած է իր վիճակին վրայ, և այն ատեն տեսած է որ ինք ու իր նախորդները տարիներ ու տարիներ կոյր խաղալիքի մը պէս գործածուեր են լրագրապետին կողմէ, թէ հասարակ չահագործման առարկաներ դարձեր են անոր ձեռքը, թէ իրենք չարարուեր, աչքի լոյս ու մտքի հարստութիւն սպառել են, հիւծեր ու սպառել են որպէս զի լրագրապետը չահի: Մեր մէջ՝ վճարման դրութեան անդրաշնչիկ ռահվիրաները անոնք եղած են որոնք առաջին անգամ անդրադարձած են այս իրողութեան, և անոր յենլով սկսած են փո-

խարինութիւն պահանջել իրենց աշխատակցութեան համար: Լրագրապետները բնականաբար առանց պայքարի չեն յանձնուած անոնք դեռ բաւական ժամանակ մաքառած են այդ հոսանքին դէմ, ինչպէս որ կը մաքառին տակաւին մինչև այսօր, թէև քայլ առ քայլ ընկճուելով գրող տարրին պահանջումներէն գոյացած հոսանքէն, որ միակ պատճառն է արդէն վճարման դրութեան աստիճանական բարելւման:

Այս օրերս իսկ ուր ուրիշ ամէն ատենէ աւելի հայ գրողներ վճարման դրութեան բարելաւումը կը հետապնդեն, ամէնուն աչքը կրկին լրագրապետներուն վրայ է, կրկին անոնք են որ պատասխանատու կը նկատուին հայ գրագէտ ըսուած արարածին արդի ուղորմուկ ու տխուր վիճակին: Եւ ապահովաբար իրաւունք ունին: Բայց որպէս զի իրենց այդ մեղադրանքը բացարձակապէս իրաւացի նկատուի, որպէս զի անիրաւութեան ամէն տեսակէտ մերկացուի անոր վրայէն, անհրաժեշտ հարկ կայ դնելու զանազանութիւն մը՝ զոր վճարման դրութեան բարելաւումը հետապնդողները մոռցած ըլլալ կը թուին:

Մենք կ'ընդունինք,—և արդէն ուրիշ տեղեր բազմիցս կրկնած ենք,—թէ հայ գրագէտին նիւթական վիճակը միայն լրագրապետները կրնան բարւոքել, կ'ընդունինք թէ գլխաւորաբար անոնց օձիքին պէտք է կառչիլ աւելի արդար վճարման դրութիւն մը ձեռք բերելու համար: Բայց լրագրապետ ըսելով պէտք չէ ամէնքը մէկանց հասկնալ, այլ միայն ու միայն օրաթերթի տէրերը:

Սկիզբէն ի վեր, մեր օրաթերթերը տընտեսական ձեռնարկներ եղած են, գրեթէ առանց բացառութեան: Նոյն իսկ այն ժամանակները երբ հայ ժողովուրդին անընթերցասիրութեան հետեւանքով լրագիրները շատ անբաւական սպառում մը ունէին, երբ ծանուցում և հարսանեկան հանգէսներու, նըշանտուքի կամ յուզարկաւորութեան արձանագրութիւններ այսօրուան պէս հասոյթի պատուական աղբիւրներ չէին, օրաթերթի վարիչները միջոցը կը գտնէին շահու անսովոր ճամբաներ բանալու, ջրջերն ու բարձ-

րաստիճան եկեղեցականները սիրաշահելու և իրենց ձեռնարկին գոյութեան հետ ապահովելու նաև շահ մը որ յաճախ շատ մեծ համեմատութեանց հասած է: Վաղընջուց լրագրապետ մը կ'ըսէր յաճախ թէ իրենց ատենը միակ առաջնորդ մը սիրաշահելով տարուան մը տան ուտեստը կրնային ապահովել: Եւ մեծ մասը այդպէս եղած են, առաւելապէս այդ պայմաններուն շնորհիւ կրցած են տոկալ և իրենց ձեռնարկը կանգուն պահել, մինչև որ ժողովուրդին աստիճանական զարգացման, ինչպէս նաև միայուն ու պատահական ծանուցմանց և ուրիշ հասոյթներու յաւելման շնորհիւ՝ ամէն թերթ կրցած է ինքզինքը ապրեցնել ու շահ թողուլ:

Անցեալին համար՝ այսպէս Գալով ներկային, հարկ կ'այ ըսելու թէ այս օրուան լրագիր մը գոյութեան և յարատեւութեան ապահովութիւնը անպատճառ ընթերցողներու առատութենէն կախեալ չէ: Լրագիրը այսօր մանաւանդ դարձած է կատարեալ տնտեսական ձեռնարկ մը, և ընթերցողներէ ակնկալածէն զատ ունի հասոյթի կանոնաւոր ու բազմաթիւ աղբիւրներ՝ որոնք լիովին կը բաւեն իր մատակարարութեան համար և շահ կը թողուն: Քառորդ դար առաջ՝ հայ լրագրապետը չէր գիտեր թէ ինչ է յուզարկաւորութեան, նըշանտուքի և կամ հարսնիքի նկարագրութեանց համար ստացուած դրամը. քառորդ դար առաջ՝ հայ լրագրապետը այսօրուան պէս առատ ծանուցման բաժին չունէր: Չունէր նաև միայուն ծանուցումներ,—զոր օրինակ՝ երկաթուղիի ընկերութիւններէ, դրամատուններէ, Ռէժիէն, և լն.: Ապահովագրական ընկերութիւններն ալ այսքան բազմաթիւ չէին, և եղածներն ալ իրարու հետ մրցելու, իրար ընդոտնելու պէտք չունէին որպէս զի հայ լրագրապետը առիթէն օգտուէր: Ծիշէ է որ քառորդ դար առաջ ջոջերն ու եկեղեցականները կային, որոնք դրամական անձկութեանց միջոցին շատ անգամ նախախնամական օգնութիւն մը կ'ընէին հայ լրագրապետին, բայց վերջապէս՝ եթէ հայ լրագիրներու անցեալ ու ներկայ արտասովոր հասոյթները բազմա-

տելու ըլլանք, անխուսափելի կերպով պիտի մղուինք հետեւցնելու թէ այսօրուան հայ լրագրատպետը անհունապէս աւելի լաւ վիճակ մը ունի քան իր քառորդ դար առաջուան պաշտօնակիցները, և թէ անոնցմէ անբաղդատելիօրէն աւելի կը շահի: Եւ որովհետեւ այդ շահը մնայուն է, եւ հետզհետէ աւելնալու հակամէտ, հետեւաբար՝ կրնանք միեւնոյն կերպով եզրակացնել թէ հայ լրագրատպետները այսօր մանաւանդ ի վիճակի են աւելի արդար եւ աւելի բաւարար հանգամանք մը տալու վճարման դրութեան, քանի որ մանաւանդ պարբերականներուն չափ, նոյն իսկ յաճախ անոնցմէ աւելի, իրենք կը գրաւեն օրուան լաւագոյն գրողները:

Այդ միեւնոյն բանը սակայն չենք կրնար ըսել պարբերականներուն համար: Մեր մէջ՝ պարբերական հրատարակութիւնները, — չափաթիւթեր, երկչափաթիւթ եւ կամ ամսաթիւթ, — երբեք տնտեսական ձեռնարկներ չեն եղած, ու գոնէ իրենց գոյութեան արդի պայմաններուն մէջ մնալով, չեն կրնար ըլլալ նաեւ ասկէ վերջ: Լրագրական ասպարէզին մէջ՝ թերթ մը ա՛յն ատեն տնտեսական ձեռնարկ մը կը դառնայ, երբ իր բարոյական յաւակնութիւններէն անկախաբար կը հետապնդէ նաեւ նիւթական շահ մը: Բայց միայն հետապնդելը չի բաւեր, պէտք է այդ նպատակը իրականացնել, պէտք է այդ շահը գոյացնել: Եւ այդ շահը գոյացնելու համար ալ չի բաւեր միայն բարիկամեցողութիւն ու փափաք ունենալ, այլ պէտք է շրջապատուած ըլլալ այն տեսակ միջոցներով որոնք կարելի դարձնեն տրուած աշխատութեան պտղաբերութիւնը: Պարբերականներուն պակասածը, սկիզբէն ի վեր, հա՛ն ճիշդ այս միջոցները եղած են. եւ կամ այդ միջոցները այնքան անբաւական եղած են որ գրեթէ ոչ մէկ պարբերական հրատարակութիւն կրցած է իբր տնտեսական ձեռնարկ տեւականացնել իր նիւթական գոյութիւնը: Մտնենք մանրամասնութեանց մէջ՝ որպէս զի աւելի համոզիչ դառնանք. — Պարբերական հրատարակութիւն մը երբեք չի

կրնար օգտուիլ օրաթերթերու համար սովորական դարձած բոլոր հասոյթի աղբիւրներէն: Օրինակի համար՝ չի կրնար օրաթերթերու պէս առատ ծանուցում ունենալ, մնայուն կամ պատահական. նաեւ՝ յուղարկաւորութեան, հարսնիքի կամ նշանտուքի տոթիթներն ալ չի կրնար շահագործել ա՛յնպէս՝ ինչպէս օրաթերթերը կը շահագործեն: Արդ, օրաթերթերը, միայն ու միայն այդ հասոյթներուն շնորհիւ կրնան տնտեսական ձեռնարկներ դառնալ եւ աւելի կամ նուազ փառաւոր շահեր ընել. քանի որ պարբերականները զրկուած են այդ ամէնէն, կը հետեւի ուրեմն թէ կարելի չէ որ տնտեսական ձեռնարկներ դառնան, ապահովին իրենց նիւթական գոյութիւնը, ու շահին: Իրենց գոյութեան միակ միջոցը ընթերցողներն են, և անոնք ալ՝ բաղդատմամբ օրաթերթերու ընթերցողներուն՝ շատ անգոհացուցիչ համեմատութեան մը մէջ կը գտնուին: Օրաթերթերը, մեր մէջ, մինչև 3—4000 օրինակ կրնան սպառիլ, բայց պարբերականի մը համար՝ սպառման բարձրագոյն թիւը 1000—1500ը չանցնիր:


Այս պայմաններուն մէջ՝ պարբերական հրատարակութեանց վարիչները ինչպէ՞ս կըրնան տոկալ աշխատակցի վճարման պահանջներուն: Չեմ ուղեր ըսել թէ բան մը չեն շահիր, բայց վերջապէս եթէ շահ ալ գոյանայ՝ հազիւ թէ վարիչ խմբագրին աշխատութիւնը կրնայ փոխարինել, ինչ որ շատ անգամ հազուադէպ ալ է: Այս եղած է մեր պարբերականներուն վիճակը՝ սկիզբէն ի վեր: «Յաւալի է նաեւ, թէ ես՝ որ հանրութեան համար կ'աշխատիմ, — կը գրէր Տէմիրճիպաշեան 1888ին՝ Գրական եւ իմաստասիրական Շարժումին առաջին տարին կնքելով, — զուրկ ըլլամ այն դարգացման միջոցներու մեծագոյն մասէն, զորս առատօրէն կը վայելեն ազգային կենաց օտար բազում հայ անհատներ: Չը կրցայ յուլիսին նորոգել վեցամսեայ բաժանորդագիրն իմ դասախօսութեանցս ու հրատարակութեանս համար աւանանարկաւոր միակ Եւրոպական օրագրին (Journal des Economistes)»: Ու մտածել

պէտք է թէ այս տողերը գրողը առանձին պարբերականի մը վարիչն է: Նոյն բանը եղած է իրմէ առաջ հրատարակուած պարբերականներուն համար. նոյն բանը նաև՝ իրմէ վերջը հրատարակուածներուն համար: Այսօր ալ՝ պարբերականի մը վիճակը տարբեր բան մը չէ: Արդար չէ ուրեմն իրենց վարիչները բռնադատել որ անպատճառ վճարեն, և վճարեն մանաւանդ ո՛չ թէ ինչ որ կրնան, այլ ինչ որ կը պահանջուի: Եթէ առաջին օրէն մեր գրողները այս աստիճան խստու-

թիւն ցոյց տուած ըլլային պարբերականներուն նկատմամբ, անոնցմէ գրեթէ ոչ մէկը կրնար չարունակել իր հրատարակութիւնը, հոգ չէ թէ մէկ տարուան չըջանի մը մէջ: Եւ եթէ այդպէս եղած ըլլար, այսօր մեր դրականութեան պարծանքը նկատուող բազմաթիւ գեղեցիկ հատուածներ, — գրեթէ ստուարագոյն մասը մեր դրականութեան, — կա՛մ բնաւ գրուած չպիտի ըլլար, և կամ ձեռագիր պիտի մնար դարակի մը անկիւնը:

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ԼՈՆԿԷ ԱՆՅԱԾ ԸԼԼԱԼՈՒ Ե...



ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆԻՆ

Վայելքի մեղկ ու տարփոտ կարօտով մը քաղաքին
Ժխորներէն հեռացայ, գիշեր ատեն միս մինակ,
Անտառներու լայն ուղին կ'երկարէր դէմս չիփչիտակ,
Ու հեռուէն կ'որոշուէր ծովուն երգը մոլեգին:

Դիչերներ կան ուր հոգիս հեծկըլտալու պէտք ունի,
Դիչերներ ալ՝ ուր խինդի գրգռումներ կ'ունենամ:
Անձնամատոյց գրգռներն պապակովը խօլական
Այդ իրիկուն առանձին թափառեցայ գողունի:

Խելայեղ բուրում մը կը ծածանէր անպարփակ,
Ուրկէ ջիղերս թմրեցան մէկէնիմէկ՝ կապոյտին
Ցնորական հաճոյքէն չը գինովցած տակաւին,
Զիւնի նման տեղացող լուսնին ճերմակ լոյսին տակ:

Ծովեզերքին մօտն էի: Աւաղուտքէն շատ հեռուն,
Ելեւէջող ցայտքերուն ու ջրվիժող կոհակին
Տարածութիւնն էր փռուած, անծայրածիր ու խորին,
Կապոյտ, անծաւ շղարչի դողդըղանքով մը անհուն:

Երջանկութեան ու ցոլքի յղփանք մը թոյլ կը ծեփար,
Մթնոլորտին մէջ հանդարտ, մինչդեռ ետեւ յամրօրէն,
Ծաղիկներու թերթիկներ կը թափէին հովերէն,
Որոնք տենդով օդին մէջ կը պարէին անդադար:

Երկար ատեն դիտեցի, մինչև որ մեղկ, դողդողուն,
Ու նախանձէս տենչացի՝ որ դիւթանքներն այդ ճերմակ,
Հետզհետէ քայքայուին, լուծուին հալին ոտքիս տակ,
Այնքան դժբաղդ կ'ըզգայի ինքնամփոփման այդ պահուն:

Ու անձկութեամբ դողահար երբ հեռացայ ծովեզրէն,
Մըտածեցի թէ արդեօք սիրոյ հրեշտակս իմ աղուոր,
Այս տեղերէն անցած է: Որովհետեւ անսովոր
Թովանք մը կար այդ ճամբուն գիծին վրայ դիւթեղէն:

Մ. Օ. ՊԱՐՍԱՍԵԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Ի՞նչ կ'անցնի կը դառնայ բուսակերներու ախարհին մէջ :

I.

Բաւական ժամանակ կայ որ բուսակերներուն վրայ չի խօսուիր այլևս, այսինքն ա՛յն բարեմիտ անձերուն վրայ, որոնք խորին համոզումով մը տողորուած՝ իրենց սընդեղէններուն մէջէն կը վտարեն միւսը, մասամբ կամ ամբողջովին :

Սակայն սխալ պիտի ըլլար ենթադրել թէ, այդ կերպ սննդառութեան համախոհները անհետացած են: Ընդհակառակը, անոնց թիւը կ'աճի հետզհետէ, ինչպէս կ'ըսէ Բժշկական Հանդէսի մը կարող քրոնիկագիրը՝ Ֆրէրա: Ընկերութիւններ կազմուած այս ուսան երկիրներուն մէջ՝ բնակական կ'ընեն ի նպաստ բուսակերութեան և իրենց անձին օրինակներովը կը քարոզեն զայն :

Գիտնականապէս բնօրականաբար ընող բուսակերներուն մէջէն յիշենք մասնաւորապէս Տօքթ. Շօլօ, Տօքթ. Ժիւլ Կրան, Տօքթ. Ռու, Տօքթ. Բասքալի պէս կարող բժիշկներ, ինչպէս նաև Պ. Պ. Ֆիք, Վէսքլիսէնուս, Ռիւպիէր, Լօլան, Վիլնէօլ և Արման—Կօթիէ :

Ասոնց գծած ծրագրին մանրամասնութեանց մէջ դեռ չի մտած՝ ըսենք որ սննդեղէնները գլխաւորապէս երեք մասերու կը բաժնուին :

Ա.—Անոնք որ կը ծառայեն հիւսուածները նորոգելու և ուժ առաջ բերելու :

Բ.—Անոնք որ ուժի աղբիւր մը կը ձեւացնեն (Ալքոլը ասոնց կարգէն դասած է մեր Տիւգլօն) : Այս առթիւ անգամ մըն ալ ըսենք թէ, բոլորովին սխալ է ա՛յն կարծիքը, որով ալքոլը կատարեալ սնունդ մը, մանաւանդ ուժ տուող սնունդ մը կը նկատուի : Գիտական խզմամիտ հետազոտութիւններ հակառակը ցոյց տուած են արդէն, որոնց վրայ քանիցս ծանրացանք թէ՛ այս և թէ՛ ուրիշ թերթերու մէջ այն օրէն սկսեալ յորում հաւաքողական միջոց մը ծայր առաւ : Ալ-

քոլը, փոքր չափով առնուած, իրօք, թէև վայրկեանական կորով մը միայն կուտայ, բայց հիւսուածքներու, հիւսկէններու, բջիջներու վերանորոգիչ մը և գործարանաւորութեան մէջ անհետացած տարրերու կազմակերպիչ մը չէ : Ալքոլը չի կրնար երբեք սնունդ մը ըլլալ, նոյն իսկ կարճատեւի մը համար : Նշան, չաքարը և խահուէին հոս հն և կըրնան ալապէս բարեբար դեր մը կատարել, առանց ո և է անպատեհութեան, եթէ քիչ մը չափէ աւելի իսկ գործածուին :

Գ.—Անոնք որ բնաջինջ եղած տարրերուն տեղը կը բռնեն, առանց ուժ արտադրելու : Բնասպիտակային մարմինները և ճարպերը կը վերաբերին առաջին դասակարգին : Նշայ, չաքար և բնածուխի ջլատը (իստաք քա գարպօն) երկրորդ դասակարգին : Վերջապէս ջուրը ինչպէս նաև անգործարանաւոր քիմիական աղերը՝ երրորդ դասակարգին :

Հետեւապէս, կ'ըսեն բուսակերները, մարդկային բանաւոր սննդառութեան անհրաժեշտ եղող բովանդակ բնասպիտը (ալպիւմին) կրնան հայթայթել հացը, մածուը, կարագը, թանը, կաթը և իր ածանցները : Նշայ արտադրող մարմիններն են ալիւրայինները, այսինքն հացը, գետնախնձորը, բրինձը և արմախնձորը, չաքար կը հայթայթեն պտուղները և քանի մը բանջարեղէններ, ինչպէս ստեպլինը, գալով իւղին՝ ասիկա սնունդառութեան մէջ կրնայ մուտ գտնել կարագի, ձէթի և սերերու միջոցաւ :

Վերջապէս ջուրը և աղերը առաջ կրնան գալ բանջարեղէններէ (լուբիա, ոլոռն ևլլն. ևլլն.) պտուղներէ, կաթէ, հաւկիթներէ ու ալիւրային պէս պէս մարմիններէ :

II.

Յայտնի իրողութիւն մըն է թէ բուսակերութեան այս դրութիւնը կատարելապէս ընդունելի է : Ըստ օրում, խոտակեր անասունները բուսական սննդառութեան շնորհիւ, կրնան արիւն և միս կազմել իրենց մարմնոյն մէջ :

Հիմա կը մնայ միայն գիտնալ թէ, ի՞նչ պիտի պատահի, եթէ երբեք բուսակերութեան ենթարկուին, բոլորովին մսակեր եղող կենդանիները : Շատ հաւանական, չատ կա-

րելի է որ չի պիտի կրնան դիմանալ այդ դրութեան :

Բայց մարդ խառն սննդառու մը ըլլալով, կրնայ մտակերութեան կամ բուսակերութեան հետեւիլ և կամ միայն բուսակեր ըլլալ : Այս ժուժկալութիւնը ամէն դրուատիքի արժանի է, բայց կարգ մը խառնածքներու (temperament) մեծ մասը չի կրնար բուսակերութեամբ գոհացում գտնել :

Մարմնական ու ֆիզիքական ճիգը որքան մեծ ըլլայ, որքա՛ն զօրաւոր ըլլայ, սննդառութիւնն ալ նոյնքան արագ, նոյնքան խիտ և հիւթեղ ըլլալու է, բան մը զոր կենդանական անուշղը միայն կրնայ հայթայթել :

Սակայն, բուսակերութիւնն ալ ունի իր օգուտները, օրինակի համար չաքարամիզութեան դէմ (չաքարախտ, կլիֆօզիւրի) պայքարելու լաւագոյն միջոց մըն է, այս պատճառաւ իսկ՝ սննդառութեան այդ եղանակը թերեւս ծաւալ գտնէ հետդնետէ :

Բուսակերութեան շարժումը կարծուած էն աւելի մեծ ու իրական կարեւորութիւն մը կըստանայ այս միջոցիս դարձեալ :

Բուսակերութեան ընկերութիւններ կան՝ որոնք մասնաւոր Հանդէսներ կը հրատարակեն, դումարումներ, համաժողովներ կ'ընեն Անգլիոյ, Գերմանիոյ, Պելճիգայի, Հոլանտայի ու Միացեալ—Նահանգաց մէջ : Մի՛շարմանաք բնաւ, երբ ըսեմ որ ասոնցմէ կան նաեւ Աւստրալիոյ, Հնդկաստանի ինչպէս նաեւ Չուչիմայի հերոսին՝ Թօկօի երկրին մէջ :

III.

Ֆրանսայի մէջ, բուսակերութեան ընկերութիւն մը կայ, 1899ին կազմուած, որ բաղմաթիւ անդամներ ունի : Գերմանիոյ մէջ բուսակերութիւնը շատ տարածուած է : Եթե՛թանասունի չափ պանդոկներ, ճաշարաններ և այլն բացուած են՝ միեւնոյն բուսակերներուն համար : Անգլիոյ մէջ, բուսակերութեան յատուկ ճաշարանները խիստ բազմաթիւ են և հոն կը գտնուին երկու մեծ հիւանդանոցներ, ուր բուսակերութեան դրութիւնը խըստիւ կը գործադրուի :

Բուսակերութեան ընկերութիւնը մասնաւոր ճաշարան մը հաստատած է Քորէնհակի մէջ :

Մ. Նահանգաց. մէջ, գրեթէ բոլոր մեծ քաղաքները, բուսակերութեան յատուկ իրենց ճաշարանները ունին, որոնք կատարեալ բարգաւաճման մէջ են : Ճաքոնի շատ մը քաղաքներու մէջ ալ, ինչպէս Քիօթօ և յլն. և յլն. որոնց անունները չէ յիշուած մէկիկ մէկիկ, ճաշարաններ կան մասնաւորապէս բուսակերներու համար և յաճախորդները խիստ շատ են, կ'ըսէ Լը Ժուլմալի թըլթակից Լիւտօվիք—Նօտօ :

Բուսակերները գլխաւորաբար կը ջանան քրօքակնատ ընել քաղաքներու մէջ : Գիւղերու մէջ մարդիկ չի հարկէ բուսակեր են. երկրագործներու քաջողջ վիճակը միթէ այս մասին ցայտուն ապացոյց մը չէ : Անշուշտ :

IV.

Բուսակերները, ապացուցանելու համար թէ միայն բոյսերով սնանող գործաւորները աւելի ուժեղ, աւելի կայտառ և կորովի կ'ըլլան, Չիլիցի հանքագործներու օրինակը առաջ կը բերեն, որոնք թուզով, եփած բակլայով ու խորոված ցորենով կը սնանին : Բայց բուսակերութեան ջատագոյնները պէտք չէ մոռնան որ բուսակերութիւնը վիսասկար ալ եղած է, Ֆրանսայի արեւմտեան երկաթուղիին շինութեան ատեն, երբ Անգլիացի ու Ֆրանսացի գործաւորներ կ'աշխատէին. ըստ որում, այս վերջինները մինակ հացով ու բանջարեղէններով կը սնանէին, նուազ աշխատութիւն կ'արտադրէին քան Անգլիացի գործաւորները, որոնք մսակեր էին ընդհանրապէս :

Պատմութիւնը կ'ըսէ թէ Հէլլէն ըմբիշները բուսակերութեան կը հետեւէին, թուզ, ընկոյզ, կաղին, պանիր հաց ուտելով : Բայց հիմակուան ըմբիշները աւելի կ'օգտուին մսակերութենէ քան կը վիսասուին, եթէ հաւատ ընծայենք Սանտու անուն նշանաւոր ըմբիշի մը խօսքերուն, որ օրական 246 կրամ բնասպիտ կըսպառէր, այսինքն հասարակ մարդու մը հարկ եղած բոքակածնին կրկին քանակը :

Բուսակերները, իրենց դատին պաշտպանութեանը համար, առաջ կը բերեն Լսփմայինները, որոնք, կ'ըսեն, միտով ու հացով սնանելուն համար, թէ՛ ֆիզիգապէս և թէ մտաւորապէս տխեղձ էակներ մնացած են:

Պէտք չէ մոռնալ որ բուսակերութիւնը, տնտեսագիտական տեսակէտով ալ անփութելի օգուտներ կ'ընծայէ: Չքաւոր ու կարօտ դասակարգին համար իսկապէս խընայողական դրութիւն մըն է բուսակերութիւնը: «Բաջողջ և ֆիզիգապէս զօրաւոր մարդ մը կրնայ օրը երկու դրուշով հոգալ իր սնունդական ծախքը երկու ճաշ ընելով հանդերձ: Ես ինքս (ըսողը Անգլիացի բուսակեր մըն է) ութը տարուան դժնդակ աշխատութեան մը միջոցին, օրական ինը, տասը, տասնըմէկ ժամ տքնելով, այդ գումարը ծախսեցի իմ սնունդիս համար»: Նմանապէս Անգլիոյ մէջ բուսակերութեան ջատագովներու կողմէ մէկ ամսուան մէջ 16,673 ճաշ տրուեցան դպրոցական աղքատիկ տղայոց, իւրաքանչիւր ճաշ 4 սանթիմի (հազիւ ութը փարայ) արժէքով: Միայն խնդիր է գիտնալ թէ այդպէս սնանող տղաք ի՞նչպէս կը զարգանան:

Ընդդէմ այս բնախօսական հիմն է որ բուսակերութեան թերի կողմը կը կազմէ: Պէտք է հաստատել թէ բուսական սնունդները ի՞նչ իրական արժէք ունին. մեր գործարաններուն կողմէ ի՞նչպէս կ'իւրացուին և կը մարսուին և թէ ի՞նչ օգուտ ու շահ կ'ընծայեն:

Տօքթ. Բուլթէ վերջերս անաչառ ուսումնասիրութիւն մը կատարած է բուսակերութեան վրայ, որ բարդ ու կնճռոտ հանգամանք մը ունի: Որչափ ատեն որ բորակածինը ու բնածուխը որոշեալ չափով առնուին և մարմնոյն մօտքը աւելի հաւասարակչութիւն, վախճալու բան չի կայ: Եթէ կանանչ բուսեղէնները, չոր բանջարեղէնները, հացը, կաթը յաջորդաբար գործածուին իբր սնունդ, այն ատեն մսակերութեան և բուսակերութեան խառն դրութեան արտադրած օգուտները կ'ընծայեն: Օրինակի համար, 350 կրամ բակլան և 425 կրամ բրինձը կրնան տեղը բռնել այն սնունդին, որ բաղկացած է բնածուխէ և բորակածինէ:

Տօքթ. Բուլթէի եզրակացութիւնները անհաճոյ չեն թուիր բուսակերներուն, թէև բոլորովին գոհացում ալ չեն տար անոնց: Վերջապէս նշանակութենէ դուրի պարագայ մը չէ երբ Տօքթ. Բուլթէ կ'ընդունի որ բուսեղէններէն զատ հակիթով ու կաթով սնանողները կրնան քաջառողջ մնալ, առանց ու և է անպատեհութեան. բայց միւս կողմէ, Տօքթ. Բուլթէ կ'աւելցնէ որ բուսակերութեան ու մսակերութեան խառն ու պատշաճ դրութիւն մը ալ աւելի օգտակար արդիւնքներ առաջ կը բերէ:

ՏՕՔԹ. Տ. ԱԼԼԱՅՎԷՐՏԻ ՈՐԴԻ

ԽՈՆՁ ԽԵՒԿՈՒՆՆ ԱՐԱԳՕՐԷՆ...

Խոնջ իրիկունն արագօրէն կը խոնարհի դէպի խաւար,
Բուրմունքներու հաշիւն հողւոյս մէջ կը ցանէ հեշտանք մը թոյլ:
Երգի խաղեր կը կըքոտին տակաւ. տենդոտ, յուզումնաւար:

Անօրինակ մըրափի մը մէջ կիսաղգած կը թափառիմ,
Յնցուած՝ ձայնէն ձոկաններուն որք կը լսուին դուրսը անդուլ:
Պատուհանէն կը զրկէ ինձ հովիւին համբոյրն իր մըտերիմ:

Մութ խուցիս մէջ կը պտըտկիմ առջի համբոյրն անրջելէն,
Ու չրթունքներս են բոցաւառ ջերմութենէն երազային,
Փակ են աչքերս, և կամ յանկարծ մերթ անհամբեր դուրս կը նային.
Ահ, լըռութիւնն որ կը թևէ, և ըստուերներն որ կը քալեն...:

Շուրջիս անփոթ իրերն համակ հարցումներու հանդէպ խուլ են:
Հանգիստտես կ'ըլլամ մտքիս պատկերներուն քայքայումին...
Դուն չես գիտեր թէ ի՞նչ կըզգամ գուրգուրանքէս երբոր իմին՝
Բեզի համար տենդով հիւսած երազանքներս իսկ կը խլեն...:

ՄԻՍԱԿ ՄԵԾԱՐԵՆՑ

ԱԼՔՈԼԱՄՈԼԻ ԶԱԽԱԿ

(ՊԱՏԿԵՐ ՄԸ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

Ս.

Երջանիկ բոյն մը կազմելու համար ոչ մէկ բան կը պակասէր իրենց, այն օրը՝ երբ քահանան օրհնած էր պատկնին։

Իր գործին փարած՝ թէև դեռ քիչ մը երիտասարդ՝ բայց ամէն կերպով յարմար ամուսին մը պիտի ըլլայ, կ'ըսէին փեսին համար։

«Իրիկուրնէ իրիկուն մէկ երկու քէկ կը նետէ մինակ. ան ալ չըլլայ չիկայ մի ետ», «եկեք մեկեկեք չիկայ» կ'աւելցնէին. և ուրիշներ ալ՝

«Կարգուելէ վերջ ան ալ կ'անցնի» կը պատասխանէին ու ինչպէս ըսինք, յարմար ամուսնութիւն մը կը նկատուէր եղածը։

Ամուսնութեան օրէն քիչ մը ետք, քանի մը բարեկամներ—գաղինոյին հին ընկերները—անոր ի պատիւ խնջոյք մը կը սարքեն... նոյն գաղինոյին մէջ։ Ու նոր փեսան քանի մը օրուան համար ընդհատած կեանքը կը վերսկսէր։ Տիւզի գաւաթները, իրենց անբաժանելի մեզներով չես գիտեր ինչ տարբեր համ մը կ'ունենան, որ մեղրալուսին հաճոյքներն իսկ կուգան կէտկիտել, եթէ ոչ մոռցնել տալ։

Ու մէկ երկուք, երիտասարդը ա'լ սկսած էր գրեթէ մոռնալ, թէ իր ամուսնանալը հազիւ մէկ ամիս եղած էր, թէ կին մը ունէր տունը, որ ամէն իրիկուն ակնդէտ կըսէր պատէր իր գործի ժամը լրանալուն, պաշտելիօրէն իրեն պատմելու համար, իր նոր հարսի օրական տղաւորութիւնները։

Յեղճ կինը համբերել էր։ Ամուսնական կեանքի գրեթէ միակ միջոցը, որ անխառն երջանկութեան մը ինչ ըլլալը կը հասկցնէ ամուսին մը՝ մեղրալուսինը՝ արցունքներու մէջ անցուցած էր։ Ինչ ըսել, ինչ սպասել, երբ ամուսինը, ժամը երկուքէն վերջ, դանդաղող քայլերով կը մտնէր սենեակէն ներս, և միակ

ու վերջին բառը «սա բապուճներս տո՛ւր»ը կ'ըլլար։

Այնչափ մեզներէ վերջ կերակուրի երես ո'վ պիտի նայէր, հոգ չէ թէ ինք հարսը՝ քանի մը անգամ դայն կրակի վրայ դրած, վար առած ըլլար, թէ անօթութեան ազդեցութեան տակ փորձուէր երբեմն մինակը ճաշելու և վերջը կրկին զշարէր։ Նոր հարս ըլլալ և մինակը ճաշել... Գուցէ այն օրը ամուսինը ախորժակ կ'ունենար... միասին գլուխ գլխի ժպիտներով, գուրգուրալի շօյանքներով զուարթ ճաշ մը կ'ունենային. հոս այդ տրամադիր վայրկեանին կրնար անոր զգացնել այն մեղքը զոր կը գործէր զինքը այսպէս տանջելով, մինչ կիներէն էն յետինը անգամ իրաւունք կ'ունենայ սիրոյ պաշտումի կամ գէթ յարգանքի։

Ու օրեր կ'անցնէին իրարու նման, իրարմէ աւելի գէշ և այդ կերպով անցնելիք գիշեր մը երազը կը մնար մանկամարդ կնոջ։ Վերջապէս, ա'լ համբերութիւնը հատաւ խեղճին և սկսաւ գանգատը իր բոլոր արբանեակներով. ծնողքը մէջ մտան և փեսան ունեցաւ վերջապէս սթափման օրեր։

Հիմակ պէտք էր օգտուիլ այդ կացութեանէն, պէտք էր սիրաշահիլ դայն, բայց ինչ կերպով։ Բոլոր երեւակայելի ճիգերը կը թափէր, իր կանացի ամբողջ հրապոյրները իր նպատակին ծառայացնել կ'աշխատէր, բայց քանի մը օրուան փորձը իսկ ատենց անօգուտ ըլլալը կը հաստատէր։ Օղին, օղին մինակ հաճոյք կուտար ամուսնոյն, անկից անդին ոչինչ, ու կինը օր մը գաղափար մը ունեցաւ։ Խնդիրը այն չէր որ ամուսինը կասուխէն տուն վերադառնար, իրեն միայն պատկանէր, ընտանեկան բոյնին կարելի եղա՞ծին չափ տաք վերաբերում մը ցուցնէր։ Այդ յարկը պէտք էր նմանցնել անոր որու մուսխոտ ապականած մթնոլորտին մէջ միայն կը գտնէր ամուսինը կեանքի գերագոյն հաճոյքը. —գաղինոն պէտք էր տուն փոխադրել։

Օր մը ամուսինը չէք գիտեր ինչ հաճոյքով կը տեսնէ տեսակ տեսակ մէզէները օղիին, զորս բծախնդիր ընտրանք մը սենեակին վրայ դրած էր կինը։ Ու կըսէր իրեն

կունը կանուխ գործէն վերադառնալուն պէս գրեթէ տղայական հրճուանքով մը անցնիլ սեղանին շուրջը և անպատում հաճոյքով մը կուլ տալ այն անմահական(!) նեկտարը զոր իր կինն իսկ կը մատուցակէր իրեն։ Ան ի՞նչ ուրախութիւն երբ դեռ գլուխը աւելի զուարթ քան հաւասարակշռութիւնը կորսնցուցած, գգուանքով կը սեղմէր այն ձեռքերը որոնք իրեն կենդանութիւն տուող բաժակներ կը մեծարէին ու ի՞նչ հրճուանք կնոջը համար որ առաջին անգամ կը զգար ամուսնոյն գգուանքները։ Հոգ չէ թէ ատոնք իրմէ աւելի իր ընծեռած հեղուկին համար ըլլային. չէ՞ մի որ իրեն կ'ուղղուէին։ Սեղծը այնչափ ամիսներ զրկուած մնացեր էր անոնցմէ։

Բ.

Այդ կեանքն ալ սակայն շատ միօրինակ, աւելի ճիշդը տաղտկացուցիչ գալ սկսաւ էրկանը։ Մեզէն լաւ էր. օղին ալ նոյնպէս, բայց ընկերները կը պակսէին, անմահականը(!) կու տուած միջոցին անոր յատուկ խօսակցութիւնն ալ պէտք էր, գազինոյի տափակ, անոր յատուկ յանկերդները որոնք միշտ կրկնութիւններ ըլլալով հանդերձ՝ չէին դադրեր միշտ ալ սրաբանութիւններ նկատուելէ և հաճոյք ազդելէ։ Այդ կէտը կինն ալ կը զգար, բայց իր սրտիսը գիտնալ շատ անգամ զայն լրացնել չը նշանակեր և խեղճը իր բոլոր ճարպիկութեամբը մէկտեղ դարձան մը գըտնելու անկարող կը զգար ինքզինքը։

Ամուսինը խմած, ինք թեթեւ գլխով, խօսակցութիւնը հետզհետէ կը թունար և ի վերջոյ կուգար կը հասնէր այն վիճակին զոր կ'ուսննար երբեմն ամուսինը գազինոյէ վերադարձին։ հետեւաբար տունը խմելով ալ մեծ տարբերութիւն մը չէր տեսնուեր։

Նոր գոհողութիւն մըն ալ հարկ էր, ինչ որ չուշացաւ, այնչափ մեծ էր կնոջը փափաքը ամուսինը ամբողջովին իրեն պահելու։ Անոր ամենօրեայ ստիպումներուն տեղի տալով, ինքն ալ սկսաւ քանի մը գաւաթ պարպել։

Տեսնելու էր մարդուն հաճոյքը, կինը քանի մը բաժակով գրեթէ գինով տեսնե-

իրա՛ւ, առջի օրերը կինը յաջողեցաւ։ Ամուսինն ալ կը ստիպէր խմելու այնչափ միայն որչափ ինք կը խմէր։ Եթէ այդ քանակը առջի բերան մեծագոյն յաջողութիւն մըն էր, այնպէս չը մնաց սակայն մինչև վերջը։ Քանի օրերը անցնէին, սովորութեամբ ինքն ալ կը սկսէր աւելի շատ տանիլ ալքովը և քանի մը ամիս վերջ իրերը իրենց նախկին վիճակին դարձեր էին, սա տարբերութեամբ միայն որ պառկելու ժամանակը եկած միջոցին գինովը մէկ հոգի չէր ըլլար, երկուքն ալ նոյն վիճակը կ'ուսննային։

Երիտասարդը տարիներով կըլլած ալքովէն մեծ ազդեցութիւն մը կրած ըլլալ չէր թուեր բնութենէն շատ լաւ օժտուած մարմնոյն վրայ։ Կինն ալ մեծ տարբերութիւն մը չէր տեսնէր իր առողջութեանը վրայ։ Քիչ մը ջգային եղած էր... ամէնը այնչափ։ Ու կարծես ժամանակի մը համար գտնուած պլտի ըլլար երջանիկ բոյն մը կազմելու այն գուշակութիւնը զոր ոմանք ունեցեր էին իրենց ամուսնութեան օրը։

Գ.

Առանց ալքովի միջամտութեան իսկ ընտանեկան երջանիկ, անվիշտ կեանքը հազուադէպ է, ո՛ւր մնաց օղիի սպառող ազդեցութեամբ երազուած երջանկութեան մշտակայութիւնը ապահովել։ Առջի զաւկին ծնունդը կարգ մը հիւանդութիւններ երեւան բերաւ մօրը ինչպէս նաև նորածինին վրայ որոշ խմորը յայտնի էր թէ ալքովն էր։ Ասոնցմէ դատելով, կրնար հասկցուիլ այն աւերն ալ զոր օղին գործած էր նոյնիսկ ամուսնոյն երբեմնի ջղապինդ կաղմուածքին վրայ։

Եւ իրաւ, խեղճ մարդը ա՛լ բոլորովին կորուսեր էր իր դէմքի կարմրութիւնը, խորացած աչքերով մեռելատիպ կերպարանք մը առած էր։ Շատերը երեւութապէս գիրցնելով ակնթարթի մը մէջ անդիի ալխարհ զրկող ալքովը, իրեն յամր՝ բայց աւելի՛ դժեղասկ, աւելի՛ աղետալի մահ մը կը պատրաստէր։ Ալքովին թոքախտը... Լատոյժ, դողդոջուն մատներով հիմայ հազիւ կրնար բռնել գաւաթը որ կեանքին ամբողջ հաճոյքը կաղմած էր։ Ճշմարտապէս թունալիր հաճոյք մը որ գերեզմանէն ալ անդին կը սպառնայ

իր ազդեցութիւնը ի գործ դնել: Նորածինը որ առջի օրերը այնչափ խինդ ու խնձիր էր պատճառած հօր — մօր, հիմայ վշտառիթ արձան մըն էր՝ իր ալքողամոլ ծնողքին շահատակութեանց: Ու չորս — հինգ տարեկան եղած միջոցին երբ ա'լ կատարելապէս հասկըցուեր էր թէ իրենց միակ հոգեհատորը ապուշ մը մնալու դատապարտուած էր ամբողջ կեանքին մէջ, այն օրը մեծագոյն քսանակով կլլուած օղին անգամ չէր կրցած խեղդել իրենց վիշտը:

Ուրիշ մը ունենալ՝ աւելի՛ կայտառ ու խելացի, բժիշկէն առաջ բնութիւնը դրած էր այդպիսի մտածման մը գործադրութեան առջև անկարելի բառը:

Ձգենք այն խղճալի վիճակը որուն եկած յանգամ էր իր շուկայի գործը — և՛ արդէն ինչ հարկ ատով զբաղի, քանի որ դիւրաւ կարելի էր մակարեղել ընտանեկան այդ վատառողջ պայմաններուն մէջ գտնուած մարդու մը գործի աշխարհի մէջ ունենալիք վիճակը: Ամուսնոյն առողջութիւնը հետզհետէ ցաւալի վիճակ մը կ'առնէր, հիւանդկախ հատած մարդու մը շուքը կարծեա, որ հակառակ բժշկական ամէն պատուէրներու, միայն օղիի գաւաթները բռնելու համար դողդղացող մատներուն մէջ քիչ մը ոյժ դնելու կ'աշխատէր, աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել կամքը կ'ունենար աշխատելու, մէյմնալ կռուելու համար իր ջղայնացած, հետզհետէ իսթերիք, ջլախառնոր և այլ անուններով որակուող կնկան հետ և այդ կռիւները կ'ըլլային անոր շուրջ որ իրենց ամուսնութեամբ կազմելիք երջանիկ բոյնին առաջին ճռուղուն ձագուկը ըլլալ կոչուած էր, իրենց կեանքի մեծագոյն մխիթարութիւնը, իրենց ապագային միակ յենարանը, ծերութեան օրերուն հեռապատկերին մէջ երջանկօրէն անցուած երիտասարդութեան ամենասիրելի կենդանի յիշատակը:

Եւ այն եղած էր միշտ տքացող միտի զանգուած մը, վշտերու, կրծող ցաւերու պատճառ, անէացումը ապագայի ընտանեկան ամէն յոյսերու, դեռ երիտասարդ զիրենք գերեզմանի այնչափ մօտեցնող ալքոլին զաւակը, ապուշ մը:

ՄԱՏԹԷՈՍ Ֆ. ԷՊԼԻՂԱՅԵԱՆ

ԵՐԳԸ ԴՊՐՈՑԻՆ ՄԷՋ

Ծանօթ երաժշտագէտ Արամ Էֆ. Բժշկեան հրատարակած է դպրոցականներու յատուկ գեղեցիկ երկասիրութիւն մը, Գարնան դայլայիկներ, որ հաւաքածոյ մըն է մանկական սիրուն երգերու որոնց մէջ ծաղկատի մանչն ու աղջիկը իրենց մատաղ կեանքի դրուագներուն համապատասխան երգեր ու եղանակներ կը գտնեն:

Գարնան դայլայիկները 88 լայն էջերէ բաղկացած հատոր մըն է, Սագանան տպարանէն ի լոյս ընծայուած և հրատարակութիւն Բիւզանդեան Գրատան: Կը բովանդակէ 42 երգ, իրենց ձայնագրութեամբը միասին: Փառակազմին գինն է 20 դր. և պարզ կադմուածինը 15 դր.:

Այսչափ մը՝ տպագրական մասին վրայ: Գալով պարունակութեանը, երգերուն ու եղանակներուն, առաջինները շարադրուած են ձեռնհաս գրագէտներէ ու բանաստեղծներէ. իսկ վերջինները՝ մասամբ Բժշկեան Էֆ. ի հեղինակութիւնն են և մասամբ Եւրոպացի երգահաններու եղանակներուն հետեւողութեամբ պատրաստուած:

Գործը բաժնուած է երկու մասի. — Ա. Մանկապարտեզներու, Բ. Տարրական դասընթացքներու յատուկ երգեր, որոնք կը պարունակեն աղօթք, պարերգ, շարժական խաղեր ու տրամախօսութիւններ, նիւթին ու եղանակին յարմար շարժուձեւերու վրայ ծանօթութիւններով:

Անունին ընտրութեանը պէս սիրուն են երգերն ու եղանակներն ալ, — գարնան դայլայիկներ արդարեւ, զոր անմեղ չրթունքներ պիտի երգեն դպրոցական ու ընտանեկան յարկերուն տակ, զուարթ ժամանց մը վայելելով: Վերջին տարիներու մէջ չենք յիշեր որ այս տեսակ գործ մը հրատարակուած ըլլայ մեր մէջ, մանկական բանաստեղծութեանց խօսքն ու ձայնանիչը միանգամայն պարունակող:

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Յովսէփ — Իզմիրեանց Գրական Յանձնա-
 ժողովը, — եթէ ներկի ըլլար աշխարհիկ բա-
 ցատրութիւն մը գործածել այս պատկառելի
 մարմինն համար որ երկու եպիսկոպոս և մէկ
 առաջերէց ունի իր անդամներուն մէջ, — պիտի
 նմանցնէինք այն շնորհալի ու բարետոնմիկ
 կիներուն որոնք քիչ մը կը սիրեն ինքզինք-
 նին փնտռել տալ, սպասցնել տալ՝ երեւնա-
 լու համար ընկերութեան մը մէջ, նոյն իսկ
 էն լաւագոյնին: Իբր թէ տարին չատ կարճ
 անջրպետ մը եղած ըլլար, հիմակ երկու տա-
 րին մէկ անգամ միայն առիթ կ'ունենանք
 ողջունելու Յանձնաժողովը, ինչպէս այս
 հինգշաբթի, Ս. Թարգմանչաց տօնին օրը,
 1903 յունիսէն ի վեր: Եւ հաւանաբար, ու-
 չացողի, ինքզինքը փնտռել տուողի մը հա-
 ճոյքը ըմբոյնենցին այս գրական հանդէսին
 կազմակերպիչները, տեսնելով հրաւիրեալնե-
 րու բազմութիւնը որ խոնհուած էր Ղալա-
 թիոյ Խորհրդարանին մեծ ժողովասրահը,
 որոշուած ժամէն առաջ իսկ, հետաքրքիր և
 ուշադիր: Հոն էին, բարձրաստիճան եկեղե-
 ցականներէն՝ Տ. Բարթողիմէոս և Տ. Գրի-
 գորիս արքեպիսկոպոսները, Տ. Մկրտիչ Վե-
 հապետեան ու Տ. Արիստակէս Վանքեան
 եպիսկոպոսները, Պատրիարքական աթոռին
 երկու կողմը բազմած, իրենց քով ունենալով
 անմիջապէս, Վենետիկեան Միփթարեաննե-
 րէն՝ Հ. Յովհ. Թորոսեան և Հ. Վարդան
 Հացունի, Վիեննական Միփթարեաններէն
 Հ. Դրիգորիս Բալէմքեարեան և Հ. Գաբ-
 րիէլ Մէնէվիչեան վարդապետները, ու Ան-
 տոնեան միաբանութեան մեծաւոր Հ. Միա-
 սէրեան՝ Հ. Նզիա Քիլճեան վրդ. ին հետ:
 Նոյնպէս, Բողոքականաց ազգապետ Յակոբ
 էֆ. Պոյաճեան՝ ազգապետարանի իրաւագէտ
 խորհրդական Արշակ էֆ. Շմաւոնեանի հետ,
 Աւետաբերի երկու գլխաւոր խմբագիրները՝
 Պատ. Դրիգորեան և Ն. Գոնտաեան էֆ.:
 Բաւական թիւով ծանօթ վարդապետներ
 ու քահանաներէ զատ, Բազ. Ժողովը ներ-
 կայ էր գրեթէ ամբողջութեամբ, նոյնպէս,

Ուսումնական Խորհուրդի, Ղալաթիոյ Խնա-
 մակալութեան և Հոգաբարձութեանց ան-
 դամներ: Գրական դասէն, Տեարք՝ Ռ. Յ.
 Պէրպէրեան, Յակոբ Ոսկան, Աղեքս. Փա-
 նոսեան, Տիգրան Ելքէնճեան, Յ. Գ. Մրմըր-
 եան, Ն. Ճիվանեան, Մարկոս Աղաբէգեան,
 Տօքթ. Թօփճեան, Մ. Նաթանեան, լրագ-
 բապետներ, մամուլի ներկայացուցիչներ, ու-
 սուցիչներ և այլն: Բժշկական դասէն՝ Տոքթ.
 Ն. Տաղաւարեան, Տօքթ. Ե. Մասիս, Տօքթ.
 Վարդաղարեան, Տօքթ. Վահէ և այլն: Յի-
 շենք նաև Իզմիրի ազգայիններէն Տիրան
 էֆ. Գասպարեան որ հիւր կը գտնուի մայ-
 րաքաղաքս:

Առաւօտեան ժամերգութեանց նախագա-
 հելէ ու Ս. Թարգմանչաց տօնին վրայ քա-
 րոզելէ ետքը, ժամ 3½-ին հանդիսասրահ մը
 տաւ Օրմանեան Ս. Պատրիարքը՝ վեղար ի
 գլուխ՝ և բազմեցաւ նախագահական աթոռ:
 Միեւնոյն ատեն, կանանչ սեղանին շուրջ կը
 բոլորուէին՝ Յ. Իզմիրեանց Գրական Յանձ-
 նաժողովի ատենապետ Վսեմ. Դաբրիէլ էֆ.
 Նորատունկեան, ատենադպիր Տ. Յովհաննէս
 Ա. քահանայ Մկրեան և անդամներէն Վա-
 հան պէյ Էսաեան:

Երբ Տ. Մկրեան Հայրը ոտքի ելաւ, ա-
 ւանդական դարձած սովորութեամբ մը գի-
 տէինք թէ ինք պիտի կարգար տեղեկագիրը
 և թէ հանդէսը բացուած էր: Միայն թէ,
 տեղեկագիրին ընդարձակութիւնը մէկ կողմէն
 ու տարիքին յառաջացումը որ շունչը կըս-
 պառէր՝ միւս կողմէն՝ հարկադրեցին Բերայի
 ալեղարդ աւազներէցը ընդհատել իր ընթեր-
 ցումը և տեղեկագիրին երկրորդ կիսուն ըն-
 թերցումը թողուլ Հրանտ էֆ. Ասատուրի:

Կը ցաւինք որ տեղը ու ժամանակը՝ կը
 պակսին Մասիսին՝ տպելու համար այդ տե-
 ղեկագիրը զոր բարեբաղդաբար ամբողջու-
 թեամբ հրատարակեցին արդէն օրաթերթերը:
 Յանձնաժողովը, ինչպէս նախորդ թիւով ալ
 ծանուցած ենք, իրեն ներկայացուած 18 եր-
 կասիրութիւններէն մրցանակի արժանի դա-
 տած է հինգ գործեր, հիմնուելով նախաքնն-
 ւիչ Մասնախումբին գնահատման ու դա-
 տաստանին վրայ: Այդ հինգ գործերն են՝

Թէոդիկ Լապճինճեանի Պոլսոյ հայնվարք և Տիգրան Զիթճեանի Վանայ գաւառաբար-բառք որոնք ստացան Յնական ոսկի մրցա-նակ. և Սիմոն Գափամաճեանի Հայերէն Բաղգիբը (որ տպագրուելու վրայ է), Օ. Բարադամեանի Վանայ համայնապատկերը ու Կարապետ Գարեկեանի Սեբասթիոյ գաւա-ռալիզումը, 30ական ոսկի մրցանակ:

Տեղեկագրին ընթերցումէն վերջը, խօսք առնելով Դադ. Ժողովի ատենապետ Տիգրան էֆ. Եւսուֆեան ի դիմաց Վարչու-թեան շնորհակալութիւն յայտնեց Յանձնա-ժողովին՝ իր անձնուէր ու խղճամիտ աշխա-տութեանն համար, և շնորհաւորեց մրցա-նակի արժանացող հեղինակները:

Ս. Պատրիարքը բազմակողմանի տեսու-թիւն մը ըրաւ Յանձնաժողովին կատարած աշխատութեան կարեւորութեանը վրայ՝ գը-րական ու բանասիրական տեսակէտներով, և հարկ դատեց բացատրել թէ այդ մարմինը յանձնառութիւն չունի, ինչպէս կտակն ալ չի տրամադրեր, վարձատրուած երկերուն տպագրութեամբն զբաղելու: Յաւ յայտնեց որ բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանց տա-կաւին հետեւող մը չունեցաւ, բաց ի Կարա-պետ Խուպէսէրեանէ որ տարեկան 10 ոսկի սահմանած է լաւագոյն դասագրքին պատ-րաստութեան համար: Շնորհաւորեց Յանձ-նաժողովը, և մասնաւորապէս անոր Վսեմ. Ատենապետը՝ Նորատունկեան էֆ.ն ու ատե-նադպիր Տ. Մկրեան Հայրը իրենց անձանձիր աշխատութեանն համար այս գրական կտա-կին գործադրութեան առաջին տարիէն ի վեր:

Ս. Պատրիարքը իր բանախօսութիւնը աւարտեց ջերմագին բարեմաղթութիւններով Վեհ. Կայսեր արեւշատութեան համար, Որոյ բարձր հովանիին ներքեւ կը վայելէ Ազգը այս կրթական, իմացական, գրական ու լեզ-ուական դիւրութիւններն ու շնորհները: Բո-լոր հանդիսականները յօտնկայս «ամէն»նե-րով ձայնակցեցան այս բարեմաղթութեանց ու ծափահարեցին:

Հոճելի անակնկալ մը պատճառեց Նորա-տունկեան էֆ. երբ պատասխանելու համար Ս. Պատրիարքին շնորհաւորութեանց ու շը-նորհակալութեանց, բանախօսութիւն մը ար-տասանեց՝ թէ և հակիրճ: Հանրային պաշտոն

սահմանողները — ըսաւ Յանձնաժողովին Վսեմ. Ատենապետը — պէտք է խղճի մօտք կատարեն իրենց պարտականութիւնները և շնորհակալութիւն չպահեն: Իրենց համար կը բաւէ իրենց խղճին վկայութիւնը, և երբ այսպիսի պատկառելի գումարման մը մէջ, Ազգին ամէն դասակարգերը ներկայացնող ընտրեալ բազմութեան մը գոհունակութեան կ'արժանանան, բնական է որ մեծագոյն վար-ձատրութիւնը ստացած կը համարին: Յանձ-նաժողովին աշխատութիւնները սահմանաւոր մնացին, զի բարեյիշատակ Յ. Իզմիրեանց իր հետեւողները չունեցաւ, թէ և Ազգին մէջ կը գտնուին բարեկեցիկ վիճակի տէր ան-հատներ որոնք կրնային նոյն գրասիրական շաւղին հետեւիլ: Յանձնաժողովին մեծագոյն հոգածութեան առարկան եղաւ ճշդիւ և կէտ առ կէտ գործադրել կտակը, այն համոզու-մով թէ կտակներուն երկիւղած գործադրումը լաւագոյն միջոցն է կտակներն աւելցնելու, մինչ մեր մէջ կտակներուն թիւը և թերի գործադրման կարծիքը փնտրած է բարեգոր-ծութեան ոգիին: Ազգ մը պէտք է վերջին ծայր զգուշաւոր ըլլայ իր կտակարարներուն կամքը յարգելու, ինչպէս ամէնէն զարգաց-եալ առեւտրական ազգերուն մէջ վաճառա-կանը հոգ կը տանի իր ստորագրութիւնը յարգելու:

Նորատունկեան էֆ. ի խօսքերը ջերմապէս ծափահարուեցան:

Ս. Պատրիարքը կրկին խօսք առնելով դիտել տուաւ թէ առիթ ունեցած է մօտէն քննելու վէճի առարկայ եղող կտակի խըն-դիրներ և տեսած է որ, ո՛չ թէ Ազգը թե-րացեր է կտակները գործադրելու, այլ կտա-կարարները ժամանակին թերի չինքն են ի-րենց կտակները: Այս տեսութեամբ՝ լաւա-գոյն և ապահով ձեւը նկատեց որ բարեւար-ները կենդանւոյն իրենք իրենց ձեռամբ գոր-ծադրեն կտակին:

Հանդէսը փակուեցաւ Պահպանիչով:

Ներկաներէն ոմանք պահ մը հանդիսատրահ մնացին աչքէ անցունելով վարձատրուած ձե-ռագիրները որոնք Յանձնաժողովի սեղանին վրայ կը գտնուէին: Այս առթիւ խնդակցու-թիւններ ուղղուեցան երկու «պատկաւոր»նե-րուն՝ Թէոդիկի և Ս. Գափամաճեանի որոնք անձամբ ներկայ էին:

ԵՅՈՎԱԿԻՈՅ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Եթովպիոյ Հայոց հոգեւոր հովիւ Տ. Մկրտիչ քահանայ Զիլատեան որուն ճիւղութիւն ժամանումը ծանուցած էինք ժամանակին, տասներեքօրեայ ցամաքային ուղեւորութենէ մը յետոյ հասնելով Հապէշիստանի մայրաքաղաքը՝ Ատիս — Ապպա, պատիւ ունեցեր է Մենելիք կայսեր ներկայանալու:

Յունիս 25ին, Տ. Մկրտիչ քահանայ ընկերակցութեամբ տեղւոյն առաջնակարգ ազգայիններէն Յակոբ Պաղտասարեան, Մարգար Միրզաեան, Սարգիս Ազնաւորեան և Պետրոս Պոյաճեան Տեարք՝ կ'առաջնորդուի պալատ. հիւրասրահին մէջ, կայսեր խորհրդական Պ. Իւլք ողջունելով հայ երէցը, անոր կուրծքէն կախուած խաչը կը համբուրէ ու կը հրաւիրէ դահլիճ. կայսրը բազմած էր իր գահուն վրայ, շրջապատուած ներքին, արտաքին և կրօնական գործոց նախարարներէն՝ ամէնքն ալ ոտքի վրայ: Մենելիք կայսրը ոտքի ելլելով, կը համբուրէ խաչը, և Տ. Մկրտիչ քահանային ձեռքը սեղմելով՝ կը հրամայէ որ նստի յատկապէս պատրաստուած աթոռին վրայ: Տ. Մկրտիչ Հայրը շնորհակալութիւն կը յայտնէ այն բարեացակամութեան ու սիրոյն համար զոր Մենելիք կայսրը կը տածէ Եթովպիաբնակ Հայոց նրկատմամբ և կը հաղորդէ Օրմանեան Ս. Պատրիարքին ողջոյնները: Կայսրը ժպտագին կը պատասխանէ, թէ պիտի սիրէ միշտ իր հովանիին ներքեւ գտնուող Հայերը:

«Յետոյ, — Տ. Մկրտիչ քահանայ ինքն իսկ է որ կը պատմէ, — ոտքի ելայ և պատկառանք մատուցի իրեն՝ պատրիարքական գրութիւններն և Ս. Միւռնը, Կայսրը ոտքի ելաւ, առաւ ձեռքէս և համբուրեց Ս. միւռնը. յետոյ իրեն յանձնեցի նոյն պատկառանքը՝ Բարթող վաշայի նուէրը, գրութիւնն ու պատկերը: Կայսրն երբ տեսաւ Ս. Գերեզմանը, ելաւ ոտքի, գլխարկը վար առաւ խոնարհեցաւ, համբուրեց և սկսաւ հիացմամբ դիտել և շատ գոհ մնաց ու կրկնակի շնորհակալութիւն յայտնեց: Վայրկեան մը լռութենէ վերջ, կիրակի օրը պատարագելու փա-

փաք յայտնեցի իր վեհափառ Թանկազին կենաց աղօթելու համար: Կայսրը հաճութեամբ արտօնեց: 20 վայրկեան տեւեց տեսակցութիւնը. հրաժեշտ առի նորին վեհափառութենէն և մեկնեցայ. մինիստրը մինչև արտաքին դուռն առաջնորդեց մեզ: Կիրակի օրը հանդիսաւորապէս պատարագեցի. Հայ գաղութը գրէթէ ամբողջովին ներկայ էր. ներկայ էին նաև Յոյներ և Հապէշներ»:

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ ԱՏԱԲԱԶԱՐ

Այս վարժարանը, զոր կը վարեն ինը անդամներէ բաղկացած խնամակալութիւն մը, և բնիկ ու Ամերիկացի 11 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը, հիմնական դաստիարակութիւն մը կուտայ բոլոր իրեն դիմող հայ աղջիկներուն: Կ'աւանդուին բնական, իմաստասիրական, չափական և այլ գիտութիւններ: Մասնաւոր ոյժ կը տրուի հայերէն և անգլ. լեզուներուն. կուսուցուին նաև թուրքերէն և ֆրանսերէն լեզուները: Վարժարանին երկու ընդարձակ և օգտակար շէնքերը, ինչպէս նաև խնամակալութեան երկու բժիշկ անդամները մեծապէս կ'ապահովեն աշակերտուհիներուն առողջութիւնը: Անաստուլու Երկաթուղին, որուն մէկ մասնագիծը մինչև քաղաքս կ'երկարի, ճամբորդութիւնը խիստ դիւրին և հաճելի կ'ընծայէ: Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 օսմ. ոսկի, զոր երկու մասնաւորով պէտք է հատուցանել: Դաշնակի դասի համար 5 կամ 3 ոսկի կը պահանջուի, դասաւորութեան թիւին համեմատ: Երգեհոնի դասի համար 2 ոսկի և ոսկի կը պահանջուի: Վարժարանին ԻԱ. տարեշրջանը կը սկսի Սեպտ. 13 (Ն. Տ.) չորեքշաբթի իրիկունը: Վարժարանին նոր յայտագիրը ուղղորդուած ձրի կը զրկուի:


Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր. Բիթի, Պայպլ Հաուս Կ. Պոլիս, կամ գրել Տոքթ. Ս. Էֆ. Գալաթեանի, ատենապետ խնամակալութեան, Ատարաղար:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Skr եւ Տճօրէն—ՏՈՒԹ. ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՆԵԼԻՔ Օրագրի

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԳ. ԸՆԿ.

Հիմնաւ Ի ԲԱՐԻՉ 1875ԻՆ
Կը գործէ ուղղակի ճրանս. կառա-
վարութեան հսկողութեան ներքեւ
Ընթացիկ ապահովգր. 339 ՄԻԼԻՈՆ Ֆր.
Դրամագլուխ եւ պահեստ 38 ՄԻԼԻՈՆ Ֆր.
Ընդ. գործակալ Պոլսոյ եւ գաւառաց
ԱՐԱՄ Ս. ԳԱԼՖԱՆԱՆ

Պոլիս, Հանօրույ խան 50
Գաւառները պատուաւոր գործակալներ կը
փնտռուին: 19—50

ՆԱԶԱՐԷԹ ԻՍԶԻՐԵԱՆ

Գ. ԱՍՏԱՐԱՆ

Պոլիս, Մարմուննար. Պարնարան խան
Թիւ 26

Ամէն կորգի դասեր կը ստանձնէ եւ
խնդրոյ տաքակայ եղած գործերու համար
թէ՛ բերանացի եւ թէ՛ թղթակցութեամբ
բանակցութիւններ կը կատարէ եւ կործիք
կը յայտնէ. կը խմբագրէ եւ կը թարգմանէ
դասերու եւ առեւտրական ու արհեստական
պայմանագրութեանց վերաբերող թուղթեր:
Ուրբաթ օրերը եւս մինչեւ կէս օր ձեռա-
բար կործիքակցութիւն կը կատարէ եւ կոր-
ծիք կը յայտնէ:

Օտմ. անօթիմ բնկերութեանց բնդհանուր
ժողովոց մէջ բաժնեկէրերը առանց վարձի
կ. ներկայ տանէ:

Ապահովագրական գործառնութիւններու
եւ Ի յառնադրել կենանքի ապահովագրական
բնկերութեանց Կատարմամբ տնտեսական եղող
անգեղակութիւնները ձեռքբար կուտայ, եւ կը
յանձնարարէ որ մինչեւ որ այս մասին կա-
րուար եղած անգեղակութիւնները իրմէ չտաք-
ուին, ապահովագրութիւն չի ստորագրուի:
Ապահովագրական վրասուց հասուցման գա-
ւառներու եւ փոխաբովանդրութեան գաւա-
ռու կը ստանձնէ:

Իսկ վարձքի մասին դիւրութիւն եւ տ-
ժանութիւն կ'ընծայէ: 8—40

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ


Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ՌԵՐԵ., ՄԵԾ ԳՈՂԱՅ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիւթին դէմ
Գ. Ե. Ե. Ե. օրերը առաւօտեան կանու-
խեն մինչեւ իրիկուան ժ. 11½
Բ. Գ. Ե. Ե. օրերը 6են մինչեւ 11½
Նիւրկի օրերը ժամադրութեամբ 7—10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵԱՆ Ի ԼՈՆԴՈՆ 1782 ԻՆ
Եւ ԳՈՐԾԻ Ի ԳՈՂԱԾ 1869ԻՆ Ի ՎԵՐ
ԸՆԴԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.
Դրամագլուխ եւ պահեստի դրամ
Պնգլ. ոսկի 4,218,000

ՖԻՆԻՔՍ ռոսկ Երչեհի դէմ Ապահով-
վագրական Ընկերութիւն մըն է. ծանօթ
իր պատաւաւորութեամբ եւ վրասուց մէջ
իր տնտեսական վճարութեանով:

ՖԻՆԻՔՍ Կապահովագրէ Երչեհի եւ
կայծակի դէմ ամէն տեսակ տնտեսական
չարտաւն անպատուաւոր, յայտնաբերուած
պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.
ՈՒՂՂԱՐՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՎՆԱՍՈՒՅ. Յառ. վճա-
րած է առաւել քան 27,000,000 անգլ.
անգի:

Ընդհ. գործակալ Պոլսոյ եւ դաւա-
ռաց. Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ,
Վիթայիս խան, Պանֆ Օթոմանի ֆոյ
Ղալաքիս:

Փախ դոտակայտ Ի Պոլիս
ՌՈՒՐ. ԱՐԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԻՔԷԼԵԱՆ
Էմիլ պէյ խան Ֆեսզիլեան խան
Զնեի Երիզեհու
Ա. ԷՆՐԱՆԻՐՃԵԱՆ

3—10

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս. Ց Ճ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԻ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ զինեռով: Նպաստաւոր պայ- պաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան մայմանները: Շահառաժիհներու տարուէ տարի անժոյշական վճարում, որով Իւնիոնի ապահովագրուողք ՁԵՐԾ են այն վիսնեհէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կենթարկուին միտ ան անձինք, որ օտարաժիհներու բարգման (accumulation d'es b n fices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեամբ զործող ընկերութեանց կ'ապա- հովագրագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Բաքըրն Ծղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Խալէթ Խան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր

քաղաքաց մէջ

10-10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՋՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱՆ, ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԳՈՐԾՍ ԼՈՒԻ ՏԸ ՊԱՎԻԵՐ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային արեւածներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամատունն է Ի Կ. Պոլիս, Բուքի Լիօնէ

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՅԵԱՆ

Գրեմեալ, Պոլիս, Ալեքսանդր Խան,

10-10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎՃԱԱՌԱՏՈՒՆ

ՀԵՐՃԱՅԻ



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Գոհարեղեններու, ամեն տեսակ կահ կարասիներու եւ ամենեւնեւ նորաձեւ

հագուստներու, ելլն.

Պատիւ ունինք ծանուցանել պատաւարժան հասարակութեան թէ՛ մեր վաճառատնաց ապրանքներուն տեսակները աւելի ճիւղայնելու ու մեր յարգելի յաճախորդաց աւելի գոհացում տալու նպատակով, ՈՍԿԵՐՉՈՒԹԵԱՆ վերաբերելով ամէն տեսակ ապրանքներէ զտա. կրնորաւ եւ աղբերու համար՝ եւ մեծ ու փոքր ամէն տարիքի յատուկ ՁԴԵՍՏԵՂԵՆՆԵՐՈՒ, ճերմակեղէններաւ եւ (թօնաֆիէ) ու միանգամայն ամէն տեսակ առաջնակարգ ԿԱՐԱՍԻՆԵՐՈՒ (ձեղունի լամբաներ, աֆիսէներ եւ այլն.) ճօխ մթերանոց մը հաստատած ենք, խիստ դիւրամատչելի գրիներով, եւ կանխիկ ու ապառիկ պայմաններով:

Արդ՝ կը հրաւիրենք մեր համակրելի յաճախորդները, որ հաճին դիմել վերայիչեալ վաճառատները, ուրկէ առաքակցոյս տնհուն գոհունակութեամբ պիտի մեկնին:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին 5 շաբաթական վճարմամբ:

2. Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ:

3. Կանխիկ ծախում ապրանքներէն միմիայն ադամանդեայ գոհարեղէնները երբ գործածուած ըստ տնիլն մնացած ըլլան՝ հարիւրին 10 զեղչով եւ կռնուին: Իսկ ապառիկ ծախում եւ տնիլն մնացած միմիայն ադամանդեայ գոհարեղէններն ալ հարիւրին 15 զեղչով եւ կռնուին:

6—10

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

8. Գ. Շարաժական վճարմանց համար հաւաքիչներ ընդմիշտ պատրաստ են:

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՒԹԵԱՆ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 13 Կ. ՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՂ. ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուրաղով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՂ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՒԿԵԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՒԿԵԱՌՔՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՄ, բուերուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

142,585,000 »

Ընկերութեան ապահովագրութեան վճարուած դրամագլուխ եւ վնասուց հատուցում

314,768,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս

56,585,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվատա, Ղալաթիա,

6—10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, ըայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենայլ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ի

ՀԱՅՅԱՅՏԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ուսի ու ուսի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարեալագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

Ս Ի Ն Կ Է Ի
ՀԱՅՏԱՅՏԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

- | | | |
|---------|---|--|
| ԲԵՐՍ. | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառշէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին. |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ. | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊԱՂԱՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյաղիա, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԿԻՒՏԱՐ | | Չարչը Պօյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ երաշխաւորութիւն:

Մասնանկողեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:

2—10

ԿԱՐԱՊԵՏ ԷՆՑ. ԻԻԻԻՃԵԱՆԻ ԹԵՐԳ.		Սրտաբժանին աղան	3	15
մանած գիրքերէն հետեւեալները կը գրեա-		Հանրակրթութեան օճիւրը	1	5
նուրին Տէր-Մինասեան գրատանը եւ մարա-		Սկզբունք Բող. Տնտեսութեան	1	4
քաղաքիս միւս հայ գրատաններուն քով.		Ընտանեկան գողանքներ	3	15
		հասոյ	դր.	6—10
Կարմիր մարդոց երգումը	2		10	
Ընտանեկանը	2		15	
Փարիզի տաւանութիւնները	1		2	
Թափառական Հրեայ	4		50	